

Բ Ա Ն Ա Վ Ե Ճ Д И С К У С С И И

«ՄԱՍՆԱ ԺՈՒՐԻ» ՕՂԱՆ-ՏՈՂԱՆԻ ԾԱԳՄԱՆ ՇՈՒՐՋ

Ս. Գ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«Մասնա ծոերի» Մոկաց պատումներում հանգութ խաթունի հայրենիքն ասպատակողները, նրա հոր ոխերիմ թշնամիները, Դավթի նենգ հակառակորդները, որոնք ինչ-որ անծանոթ երկրի թագավորներ են, հանդես են գալիս Օղան-Տողան կամ Օղան ու Տողան անուններով¹։ Ստորև մասնակի կրճատումներով բերում ենք այդ պատումներից մեկի համապատասխան հատվածը, որն անմիջապես հաջորդում է հանգութի հետ Դավթի հանդիպման դրվագին։

էն գիշեր Դավթ միտք վն էսաց.

«Ա՛ստված, քի՛ իմ կանչի,

Օղան, Տողան թագավորու ասքար կա,

Պուլուր հանգութ խաթնը՝ քաղթին տնը՝

Մարդ չկերա էնու ջհար տառ։

Խիսուն ինչ աղոթրան բացվավ,

հանդութ խաթուն էլավ, իրիշկից,

Տեսավ՝ շաղթիւր պուլուր խոր քաղթին դրած իւ։

[Դավթ] թուց գթուտիկ Զալալին,

Ջրադան ընցավ մաչ կովուն,

Քշից մանչ շաղթիւրուն, էգար։

էնքան զարկից, կուտուրից,

Հաղ ու հեսարից տուա մարդ կուտուրից.

Շատ քշից, տարավ, զատնացըցուց։

էնդեղեն Օղան, Տողան թագավոր դարձան վար Դավթին.

Բիրին, զատնը՝ խիտ զնշիւ թալիցին,

Դավթ էնդեղ բոնիցին։

Ի՞նչըխ բոնիցին.—

Ջինշիւ թուր՝ օրինակ շինած էր,

Դավթ քշից, կինաց մեչ.

Ինչ ընկավ մեչ,—

Ջնշիւի դլոխ, գո մեկ Օղան թագավորը՝ լեռ,

Մեկ՝ Տողան թագավորը՝ ձեռ,—

էնդեղեն կը կանչին.

—Հա՛յ, Դավթ բոնիցինք.

Հա՛յ, Դավթ բոնիցինք։

[Զենով Հովան Դավթին] էսաց.—Դե՛, դքի թա՛փ տու։

Ինչ էսաց, Դավթ գինք թափ իտու,

Ջնշիւ կտուրքիւ՝

Մե կինաց հարեել, մե կինաց հարեմուտ։

Ջինք, խրոխպեր էլան,

Խրոխպեր հիտիւ Օղան թագավորին կինաց,

¹ Մասնա ծոեր. Ա, Երևան, 1936, պատում Գ, ասացող Մոկացի Հովան. պատում Զ, ասացող Մոկացի Հովակիմենց 'Կազար. պատում Ը, ասացող Մոկացի Վարդան։ Մասնա ծոեր. Բ, մասն Բ, Երևան, 1951, պատում ԺԳ, ասացող Ալրարատցի Մուրադ Հովսեփյան։

Դավիթ հրտիվ Տողան թագավորին:
 Բռնիցին Օղան, Տողան թագավոր, բիրին.
 Բիրին, կապիցին, տվին հեռիվ իրանց, կը կան-
 ծամբիւր՝ կեսին [Դավիթ] էսաց.
 — Խորխպեր, արիվ տաքցավ՝ իմ ջան տաքցավ,
 Իս իլամ, լողկանամ, կամ.
 Տու մողիլաթ կաց, չփախին:
 էսաց.— Աղե՛կ:
 Դավիթ էլավ կինաց.
 Զուր կինաց լողկանալու, էկավ,
 Խորխպեր էրկու թագավորը՝ վիզ կտրեր էր²:

Այս պատումը մոկացի Հովանից գրի առել և առաջին անգամ «Սասնա ծռեր» ժողովածուի մեջ (1892 թ.) հրատարակել է Գարեգին Հովսեփյանը³։ Մեղ հետաքրքրող հատվածը նման է պատմվում մոկացի Հովակիմենց Ղազարի պատումում, որը գրի է առնվել 1899 թ., հրատարակվել Երվանդ Լալայանի «Ազգագրական հանդեսում» և առանձին գրքով (1902 թ.)⁴, ինչպես նաև մոկացի Վարդանի պատումում, որը գրի է առել և «էմինյան ազգագրական ժողովածուի» Բ հատորում հրատարակել բանահավաք Սարգիս Հայկունին (1901 թ.)⁵։ Այս երեք պատումները Գարեգին Հովսեփյանի գրի առած, բայց հրապարակ չելած, Բ պատումի հետ միասին օգնում են ճշտելու ինչպես խանգութ խաթունի հայրենի՝ երկրի, այնպես էլ թշնամի Օղան-Տողան թագավորների բուն տիրույթների տեղագրությունը։

«Սասնա ծռերի» հիշյալ պատումների հաղորդումներից պարզվում է, որ խանդութի հայրենիքը հին Ատրպատականն է՝ հետագա Իրանական Ադրբեջանը, որովհետև այդ պատումներում նրա կենտրոնատեղին համարվում է «Իրանա քաղաք» Խոյը (հին հայկական Հեբը) կամ Թավրիզը⁶։ Ուրեմն, վեպի ուրիշ պատումներից հայտնի խանդութի հայրենի քաղաք կամ երկիր Կապուտկողը, Կապուտկողի աշխարհը, չէր կարող լինել ո՛չ համանուն լեռան շրջանը, որը «կոչվել է նաև Ընծաքիսար, գտնվում է Վանա լճի հարավային կողմում, հին Ուտունիում», ո՛չ էլ «Բերդ-Կապուտին, հին Կապույտ, Արտագերս բերդը, որտեղ է, ըստ որոշ պատումների, խանդութ խաթունը»⁷։ Ըստ երևույթին, խանդութի հայրենիքի Կապուտկող (<Կապույտ-կող) անունը դարձյալ մասնաշնչում է Ատրպատականը, կամ նրա որևէ կենտրոնատեղին՝ եթե ոչ Խոյն ու Թավրիզը, ապա ավելի հին Գանձակ Շահաստանը՝ Ուրմիո լճի հարավ-արևմելքում։ Դրանք բոլորն էլ հարավային Հայաստանի բնակչի համար գտնվում էին Ուրմիո (Կապուտան) լճի կողմերում, իսկ լճի հին հայկական Կապուտան (<Կապույտ-ան) անունը⁸ լեզվաբանական բացահայտ կապի հետ միասին կարող է իմաստաբանական կապ ևս ունենալ Կապուտկող տեղանվան հետ։

Օղան-Տողան թագավորների հրոսակները խանդութի հայրենիք՝ Ատրպատական-Մարաստան էին ներխուժել Մոկսի (հարավային Հայաստանում) համեմատությամբ հակադիր կողմից։ Գարեգին Հովսեփյանի գրի առած Բ պատումի մոկացի ասացողը բացատրում է. «Մեկ Օղանա թագավորն ի, մեկ՝ Տողանա. Աջմու էն յանեն ին»⁹։ Ատրպատական-Մարաստանը, որը նույն-

² Սասնա ծռեր. Ա, էջ 212—216։

³ Նույն տեղում, էջ 159։

⁴ Նույն տեղում, էջ 287—291, 249։

⁵ Նույն տեղում, էջ 365—367, 329։

⁶ Նույն տեղում, էջ 208, 283, 288, 360, 366։

⁷ Սասնա ծռեր. Բ, մասն Բ, էջ 847։

⁸ Ըստ արաբ մատենագիր Յակուտ ալ-Համավիի, Նույն անունն էր կրում նաև լճից բարձրացող լեռը (Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, կազմեց Ն. Բ. Նալբանդյան. Երևան, 1965, էջ 33)։

⁹ Սասնա ծռեր. Ա, էջ 212-ի ծան.։

պես իրանական («Աջմու») երկիր էր, տարածվում էր հարավային Հայաստանի և Կասպից ծովին հարավ-արևմուտքից հարող ցեղային երկրների միջև։ Հենց այս վերջիններս՝ Անդրկովկասի և Իրանի մերձկասպյան շրջանները, պետք է նկատի առնվեն մեր էպոսում «Աջմու էն յան»-ի տակ։ Ըստ այսմ, սխալ է օղան-տողաններին սեմական ցեղեր համարելը։ Իբր թե արամեացիների հարավից Հայկական լեռնաշխարհ ներխուժելու ժամանակ սեմական ինչ-որ Ulani և Taruni (օղան և տողան) շեղյալ ցեղերի ճնշման տակ սասունցիների ոչ հայ նախնիները՝ Usu-su-ani ցեղերը (որոնց անունը իբր շումերերեն նշանակում է «Մեծ վիշապասպանի զավակներ») Մշո դաշտը լքելով, «ապաստանեցան լեռ և բնակած քաղաքներն իրենց անունով կոչվեցավ Սասուն»¹⁰։ Ըստ Մ. Աբեղյանի և Կ. Մելիք-Օհանջանյանի, օղան-տողանները ալլազգի են, բայց «առայժմ դժվար է որոշել Օղան-Պողանի ցեղային ծագումը»¹¹։

Ինչպես տեսանք, օղան-տողանների ծաղման վերաբերյալ շնայած կոնկրետությունից զուրկ, այնուամենայնիվ, որոշակի տվյալներ կան էպոսում։ Իրանց վրա հենվելով, կարելի է նախ կռահել, ապա օժանդակ նյութի օգնությամբ նաև որոշել, թե ում հետ գործ ունենք հանձինս Օղան և Տողան թագավորների գլխավորած չրոսակների։ Այս տեսանկյունից առանձնահատուկ ուշադրություն է արժանի այն փաստը, որ Օղան և Տողան թագավորների տիրույթները հարավային Հայաստանի համեմատությամբ գտնվում էին Ատրապատական-Մարաստանի հակառակ կողմում՝ վերջինիս և Կասպից ծովի միջև։ Իսկ դրանք Անդրկովկասի և Իրանի մերձկասպյան այն դժվարակոխ շրջաններն էին, որոնք հնուց ի վեր հազարամյակներ շարունակ բնակեցված էին տարածագում թափառակյաց և ռազմիկ ցեղերով։ Ահա թե ինչ է հաղորդում Ստրաբոնը հիշյալ շրջանների և դրանք բնակեցրած ցեղերի վերաբերյալ։ «Վրկանից աշխարհից սկսած Կասպից ծովը ընդարձակվում է՝ մինչև հասնում է Մարաստանի և Հայաստանի լեռները։ Սրանք ներքևում ունեն մահկանակերպարանք և վերջավորվում են ծովի մոտ՝ ձևացնելով ծոցի խորքը։ Լեռների երկարությամբ, ծովից սկսած մինչև բարձունքը բնակվում են քիչ քանակությամբ Աղվաններ և Հայեր. և ավելի շատ Գեղեր, Կադուսիներ, Ամարդներ, Կյուրտիներ, Անարիականներ, և ուրիշ զանազան ցեղեր, որոնք ավելի ավազակ և պատերազմիկ են քան երկրագործ.— հողերի կոշտությունն է արել այսպես... Ամբողջ այս երկիրը աղքատ է»¹²։

Այդ նույն շրջանները բնակեցրած ցեղերի մասին՝ հայոց Արտաշես արքայի օգնությամբ Իրանում գահ բարձրացած համանուն թագավորի դեմ նրանց ընդվզման կապակցությամբ, Մովսես Խորենացին հաղորդում է հետևյալը։ «Ու ոչ կամեցան հնազանդել նմա բնակիչք լերինն, որ անուանեալ կոչի յիրանց լեզուն Պատիժահար գաւառ, որ է Գեղմանց լեռն, եւ ծովեզերեալք, եւ այսր եւս քան զնոսա. նա եւ Կասբից երկիրն յայն սակս ապստամբեն ի մերոյ արքայէն։ Վասն որոյ առաքէ ի վերայ նոցա Արտաշէս զՍմբատ ամենայն զօրօքն Հայոց, ինքն արքայ յուղարկ երթալով աւուրս եօթն։ Իսկ Սըմբատայ երթեալ հնազանդէ զամենեւնսն. բայց զերկիրն Կասբից աւերեալ՝ առաւել քան զԱրտաշէսն գերի ածէ ի Հայս. ընդ որս եւ զՋարդմանոս անուն թագաւոր նոցին»¹³։ Արաք նվաճողների դեմ այդ նույն լեռնականների բարձրացրած ապստամբության մասին է հաղորդում Սեբեոսը. «Յայսմ ամի ապրստամբեցան Մարք ի ծառայութենէն Իսմայելի եւ սպանին զիշխանն հարկա-

10 Գ. Կյուրբենկյան. Մեկնաբանություն «Սասնաւոր և Բաղդասար» դրոցագրերգության ի լույս ալումներ-հայ բարբառի.— «Պատմա-բանասիրական հանդես», 1964, № 1, էջ 87։ Օսուն երկրանվան այսպիսի ստուգաբանությունը խիստ կամայական է։

11 Սասնա ծռեր. Բ, մասն Բ, էջ 864։

12 Strabo, . XI, 7, 1 (Ստրաբոն, քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան. Երևան, 1940, էջ 35)։

13 Մովսես Խորենացի, Բ, ծգ (Մովսիսի Խորենացու Պատմութիւն հայոց. քննական բնագիրը Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի. Երևան, 1981, էջ 218)։

պահանջին արքային Իսմայելի, ապաւէն եւ թիկունս իւրեանց արարին զամուրս աշխարհին Մարաց, զանտառս խորոճորս, զվիհս, զվիմուտս, եւ զխորաճորս դժնդակս՝ որ զգետովն Գազայ եւ զլրամարն Մարաց, զժիր եւ զբաջ ազգացն զօրութիւնս, որ բնակեալ էին ի նոսա, Գելն¹⁴ եւ Դելումն... ոչ իսկ նուաճեցան ի ծառայութիւն նոցա Կեթրուս եւ Սկիթեայ, որ են Գեղը¹⁵, Դելումը, հանդերձ ամենայն ամրաբնակ բազմութեամբն¹⁶։ Հմմտ. «Աշխարհացոյց»-ի հետեւյալ վկայութիւնը. «Պտղոմեոս ասէ. զաշխարհս սոցա՝ Կասք, Քադուշ, Գելը, Դիւումը. եւ Ռէ եւ Ահմատան քաղաքք են Մարաց»¹⁷։

X դարում՝ «Սասնա ծռերի» վերջնական ձևավորման ժամանակաշրջանում ևս Իրանի և Անդրկովկասի մերձկասպյան շրջանները աչքի էին ընկնում իրենց էթնիկական կազմի խայտարհեցողութեամբ և բնակիչների ռազմատենչ սովորութիւններով։ Յակուտ ալ-Համավին Գուրգանից (Կասպից ծովի հարավ-արևմտյան անկյունում) մինչև Դաղստան ձգված մերձկասպյան ցեղային երկրները թվարկում է այս հերթականութեամբ. «Այդ կողմից գնալով, կանցնես Ջուրջանի, Թարարիստանի, Դալլամի, Ջիլի, Մուղանի, Շիրվանի, Մասքաթի և Բաբ ալ-Աբվաբի սահմանագծով մինչև Սամանդար, ընդամենը չորս օրվա ճանապարհաւափ»¹⁸։ Հիշյալ ցեղային երկրներից Ջուրջանը (Գուրգան, Վերկան) և Թարարիստանը բնակեցված էին հին վրկանցիների և տապուրների սերունդների կողմից, Դալլամի բնակիչները վերոհիշյալ գելումներն էին՝ դել-միկները, Ջիլի (Գիլան) բնակիչները հին գելների սերունդներն էին, Մուղան (հին Կասպից) երկրի բնակիչները հիմնականում ներկայիս թալիշցիների նախնիներն էին, Շիրվանիներ՝ ներկայիս թաթերի նախնիները, Մասքաթիներ՝ հին մասքութների սերունդները, Բաբ ալ-Աբվաբիներ (Դերբենդն իր շրջակայքով)՝ տեղական հարավդաղստանյան և եկվոր էթնիկական տարբեր տարրերի ներկայացուցիչները։

X դարում, Արաբական խալիֆայի քայքայմանը զուգընթաց, ավելի հաճախակի էին դարձել հիշյալ մերձկասպյան ցեղերի ներխուժումները ոչ միայն Ատրպատական, այլև նրան հարևան հայկական թագավորությունների սահմանները։ Այդ են վկայում ժամանակակից թե՛ հայ, թե՛ արաբ մատենագիրները։ Վասպուրականի և Մոկսի բնակիչների հիշողության մեջ հատկապես վառ էր մնալու դելմիկների գլխավորությամբ տեղի ունեցած այն արշավանքը, որն ավարտվեց Անձևացիք գավառում (Մոկսի հարևանությամբ) նրանց կատարյալ պարտությամբ¹⁹։ Այդ արշավանքի վերաբերյալ Ա. Ն. Տեր-Ղևոնդյանը գրում է. «937—938 թթ. լաշքարի իբն ալ-Մարդին՝ Ատրպատականի նոր կառավարիչ Դալսամի հակառակորդը, հարձակում գործեց հարավային Հայաստանի (Վասպուրականի) վրա, բայց Ատոմ Արծրունին ջախջախեց նրա ամբողջ ջոկատը և սպանեց իրեն՝ լաշքարիին»²⁰։ Այդ արշավանքում դելմիկների կրած ծանր պարտությանը անդրադարձել է նաև Վ. Ֆ. Մինորսկին, մատնացույց անելով միաժամանակ, որ դրանից հետո է դելմիկների և շիրվանցիների, այսինքն՝ Իրանի (մի կողմից) և Անդրկովկասի (մյուս կողմից) մերձկասպյան շրջանների բնակչության ներկայացուցիչների միջև կնքվել «անհավատ»—

¹⁴ Կոչված նաև հայերեն գեղ (երկիրը՝ Գեղաճ), գեղում-ք (որից՝ Գեղմաճն լեռան), պարսկ. Գիլ (երկիրը՝ Գիլան), արաբ. ջիլ (երկիրը՝ Ջիլան)։

¹⁵ Գեղք-ի փոխարեն բնագրում վրկակով գեղք է (տե՛ս Գ. Վ. Արքարյան. «Սեբեոսի պատմությունը և Անանունի առեղծվածը. Երևան, 1965, էջ 198—201)։

¹⁶ Ս ե բ ե ո ս, գլ. ԽԹ (Սեբեոսի եպիսկոպոսի պատմություն, բաղադրությամբ ձեռագրաց, հանդերձ առաջարանի և ծանոթութեամբ, ի ձեռն Ստ. Մալխասեանց. Երևան, 1939, էջ 150—151)։

¹⁷ Ս. Տ. Երեմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի. Երևան, 1963, էջ 115։

¹⁸ Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, էջ 32։

¹⁹ Թ ո վ մ ա Ս թ թ ու ն ի և Ա ն ա ն ու ն. Պատմություն Արծրունյաց տան. Երևան, 1978, էջ 304—305։

²⁰ А. Н. Тер-Гевондян. Армения и Арабский халифат. Ереван, 1977, с. 246.

քրիստոնյա երկրներ արշավելու վերաբերյալ մի համաձայնություն²¹։ Ուրեմն, հնարավոր է, որ միջնադարյան Ատրպատականի և Անդրկովկասի նստակյաց բնակչությանը հարևան մերձկասպյան այս ցեղերի ընդհանրությունն է ժամանակակից հայերի կողմից կոչվել օղան-տողաններ և մեր դուցազնավեպում անձնավորման ենթարկվել հանձինս Օղան-Տողան (կամ Օղան և Տողան) թաղավորների ու նրանց զորքի։

Մեր այս հետևությունը կարելի է հիմնավորել լեզվաբանական կովանի միջոցով ևս։ Ասվեց, որ օղան-տողաններ անվան տակ հասկանալու ենք ոչ միայն իրանի, այլև Անդրկովկասի մերձկասպյան շրջանների ռազմիկ ցեղերի ամբողջությունը։ Մի փոքր ուշադրության դեպքում այս կողմերի ցեղանունների մեջ կարելի է գտնել այնպիսի մեկը, որը բավականին նման է մեր օղանին։ Խոսքը հին հայերի կողմից իրենց հյուսիս-արևելյան հարևաններին (Կուր գետի, Կովկասյան գլխավոր լեռնաշղթայի և Կասպից ծովի միջև) տրված աղուան(ք) ցեղանվան մասին է։ Նախ, նկատենք, որ օղան-ը ենթադրում է նախնական *աղան ձևը։ Հմմտ. Պողոս < Պաղոս, Օր < աւր, աօր < աւաւր և այլն։ Ինչպես Անտուան Մեյեն է գրում. «Բոլոր երկբարբառների և հատկապես աւ երկբարբառի պարզեցումը շատ հին երևույթ է հայերեն բարբառներում և ընդհանուր է նրանց բոլորին»²²։ Նկատի առնենք նաև, որ աղուան(ք) գրությունը արտացոլում է *աղան(ք) արտասանությունը։ «Այսպես՝ ունենք աղուէս, որտեղ դ-ն կարծեք ձայնավորից առաջ է. բայց այստեղ ու-ն ոչ այլ ինչ է, եթե ոչ բաղաձայն ւ-ի ձայնավորացած ձևը, և աղուէս-ը ներկայացնում է *աղւէս ձևը»²³։ Ուրեմն, Օղան < *աղան և աղուան < *աղան ցեղանունները ներկայացնում են միևնույն տերմինի այնպիսի տարբերակները, որոնցից մեկը մյուսի դրափոխված (-ւղ- = -ղւ-) ձևն է։

Վիպական ռազմիկ օղանների և եզերական աղվանների նույնացման հարցում պետք չէ մոռանալ, որ անդրկուրյան Աղվանքը թե՛ հին և թե՛ միջին դարերում ուներ խայտաբղետ էթնիկական կազմ, որ նրա մերձկասպյան շրջաններն աչքի էին ընկնում իրենց հետամնաց տնտեսաձևով և բնակչության բարբարոսական վարքուբարքով։ Մոկացի և հարավվասպուրականցի հայերը, որոնք անդրկուրյան Աղվանքից բաժանված էին Արաքսի միջին ու ստորին վտակների կազմած ընդարձակ ավազանով, կարող էին շիմանալ, որ կային նաև նստակյաց հողագործ աղվաններ։ Մի բան, որ հայտնի էր, ասենք, նրանց բնակակից Արցախ-Ուտիքի հայերին։ Հետաքրքիր է, որ Միջնաշխարհի հայերը ևս երբեմն աղուան(ք) ցեղանունը կիրառում էին Աղվանքի մերձկասպյան շրջանի բնակիչների վերաբերյալ։ Օրինակ, Մազեթաց Սանատրուկ (ըստ Փավստոս Բուզանդի՝ Սանեսան)²⁴ արքայի գործակիցներին, որոնք Անդրկովկասի մերձկասպյան բնակիչների և հարավդաղստանյան ցեղերի ներկայացուցիչներն էին²⁵, Խորենացին մի տեղ աղվաններ է համարում։ Մանուկ Գրիգորիսի սպանությունից նա գրում է. «Իսկ ի հասանել համբաւոյ վախճանին Տրդատայ, ի դաւելոյ նորին Սանատրուկոյ եւ այլոց ոմանց հանապազասուտ արանց Աղուանից՝ սպանին զերանելին, ընթաղրեալ ձիովք, բարբարոսքն ի Վատնեան դաշտին, մերձ ի Կասբիականն կոչեցեալ ծով»²⁶։

Այսպիսով, պետք է ընդունել, որ օղան < *աղան անունը ներկայացնում է աղուան (< *աղւան) ցեղանվան տարբերակը։ Նրա տակ «Սասնա ծռերի» Դավթի ճյուղի ստեղծողները նկատի են առել միջնադարյան Աղվանքի ոչ թե

21 В. Ф. Мянорский. История Ширвана и Дербенда X—XI веков. М., 1963, с. 87, 215.

22 Անտուան Մեյեն. Հայագիտական ուսումնասիրություններ. Երևան, 1978, էջ 461։

23 Նույն տեղում, էջ 78։

24 Բուզանդ, Գ, 4 (Փավստոսի Բուզանդացու պատմություն Հայոց. Թիֆլիս, 1913, էջ 22—23)։

25 Նույն տեղում, Գ, է (էջ 24—27)։

26 Մովսես Խորենացի, Գ, 4 (էջ 308—310)։

մերձկուրյան շրջանների նստակյաց հողագործ ընակչությանը, այլ նրա մերձկասպյան շրջանների թափառանալու անասնապահ ցեղերին։ Իսկ Օղան-ը Տողան-ի հտրադրությամբ՝ Օղան-Տողան, անաարակույս, նշում էր արդեն ոչ միայն Անդրկովկասի, այլ նաև Իրանի մերձկասպյան շրջանների բոլոր բարբարոս ցեղերի համահավաքությունը։ Սա մեզ հիշեց է տալիս առղան-ը սերած համարելու *տողան < *տաղան նախաձևից և ժագումնարանական սերա կապ տեսնելու նրա և հայերեն տաղանի (հավաքել, ժողովել), տաղանի (հավաքել, ժողովել) բառերի միջև²⁷։ Մեր կարծիքով, *աղան-ի հետևությունը ստեղծված *տաղան բառը (հավաքածու, ժողովված, խոնամորխ) իմաստներով) նրա ազդեցությամբ և արադարանությամբ դարձել է նախ *տաղան, ապա *աղան-ի օղան դառնալուն զուգընթաց ինքն էլ իր հերթին վերածվել է *տողան-ի. *աղան-տաղան > օղան-աղան։

ОБ ОՂԱՆ-ՏՈՂԱՆ-Е ИЗ «ДАВИДА САСУНСКОГО»

С. Г. ПЕТРОСЯН

Резюме

В армянском эпосе среди противников Давида Сасунского выступают враги родины Хандут, цари *Оղան* и *Տողան* (или *Օղան-Տողան*). Анализируя известия о них, можно заключить, что эти цари и их объединенное войско были представителями тех воинственных кочевых племен, которые в древности и в средние века жили на юго-западных берегах Каспийского моря и своими набегами часто беспокоили оседлых жителей Армении (родины Давида) и Атропатены (родины Хандут).

Имя первого из этих царей, *Оղան*, этнонимического происхождения. Оно происходит от более древнего **աղան*, которое идентично этнониму **աղան*; ср. *աղան*—армянское название жителей Кавказской Албании. Имя второго из этих царей, *Տողան*, происходит от арм. *տաղան* (> *աղան* > *Տողան*). ср. *տաղան*: «собирать, скапливать», *տաղանի* «собираться, скопляться».

27 Հ. Ահաբյան. Հայօրոյն արմատական բառարան. հ. Դ, Երևան, 1979, էջ 389.